

ԿԱՐԾԻՔ

Սոնա Կոնստանտի Սիմոնյանի «Հարադրավոր բայերը ժամանակակից հայերենում և անգլերենում (զուգադրական քննություն)» թեկնածուականատենախոսության մասին

Պաշտպանության ներկայացված սույն Ատենախոսությունը նվիրված է բայական համակարգի հանգուցային իրակություններից մեկի՝ հարադրավոր բայերի զուգադրական քննությանը: Մասնավորաբար դիտարկված են ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի կառուցվածքային կաղապարները, որոնց ուսումնասիրությունը կարևոր է ինչպես տեսական լեզվաբանության զարգացման, այնպես էլ լեզուների գործնական ուսուցման համար:

Հայերենի և անգլերենի զուգադրական ուսումնասիրությունը բառակազմության և իմաստաբանության հարացույցներում հնարավորություն է տալիս բացահայտելու երկու լեզուների բառակազմական և իմաստաբանական համակարգերի միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները: Հարադրավոր բայերի միջոցով արտահայտվում են իմաստային նրբերանգներ, որոնք որոշ դեպքերում հնարավոր չէ փոխանցել մեկ բառով արտահայտված հոմանիշների միջոցով:

Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար պաշտպանության ներկայացված սույնատենախոսությունը համընդգրկուն մի աշխատանք է, որի հեղինակը մանրակրկիտ և համակողմանի քննության է ենթարկել ժամանակակից գրական հայերենի և անգլերենի հարադրավոր բայերը, նախ ներկայացրել առաջադիր խնդրի ուսումնասիրության պատմությունը, ապա հարադրավոր բայերի կառուցվածքային կաղապարները, գործածության առանձնահատկությունները խոսքաշղթայում:

Ատենախոսության առաջին գլուխը սկսվում է ժամանակակից հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի բնորոշմամբ: Ներկայացվում են հարադրավոր բայերի անվանական բաղադրիչների բառակազմական կաղապարները: Ատենախոսի կողմից օգտագործվում են Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը» աշխատության մեջ կիրառված սկզբունքը և որոշ պայմանական նշաններ:

Իրավացիորեն նշվում է, որ համեմատվող լեզուներում էլ հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչները կարող են արտահայտվել տարբեր խոսքի մասերով: Մեծ թիվ են կազմում այն միավորները, որոնց ոչ բայական բաղադրիչը հիմնական ձևույթ է՝ արմատական բառ, որը կարող է հանդես գալ թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևերով:

Ընդհանուր առմամբ ինչպես առաջին գլխում, այնպես էլ ամբողջ աշխատանքում հստակորեն ներկայացվում են հեղինակի դիտարկումները: Ատենախոսն ունի գիտական պատշաճ մակարդակ, երևույթն զգալու, վերլուծելու, զուգահիշ լեզուների տեսական նյութի սահմանները նկատելու և ներկայացանելու շոշափելի պատրաստականություն:

Առավել հաջողված է ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Երկբաղադրիչ բայական դարձվածքներ (ԵԲԴ) և հարադրավոր բայեր»: Այստեղ ներկայացվում են երկբաղադրիչ բայական դարձվածքների տեսակները, բառային-բայական առանձնահատկությունները, դրանց դասակարգումը՝ ըստ բաղադրիչների իմաստային ծովվածության աստիճանի:

Համեմատվող լեզուներում դարձվածային իմաստ արտահայտող հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչներն ըստ էության պատկանում են իմաստային տարբեր խմբերի՝ մարմնի մասեր, մարդու ֆիզիկական հատկանիշներ և հոգեկան գործընթացներ, բնության երևույթներ, կենդանական աշխարհ և սննդամթերքի անվանումներ, օրինակ՝ *սիրտ դնել, ծով կապել, bite one's nails, fall in love* և այլն:

Հեղինակը նշում է, որ հայերենի և անգլերենի երկբաղադրիչ բայական դարձվածքները, ըստ իմաստային ծովվածության աստիճանի, լինում են՝ դարձվածային սերտաճումներ, դարձվածային միասնություններ, դարձվածային կապակցություններ:

Ատենախոսի դիտարկմամբ համադրական տիպի հայերենում թվի, հոդի և ժխտման քերականական իմաստները հիմնականում արտահայտվում են կցական կազմությունների միջոցով, մինչդեռ անգլերենում առավել շատ գործածվում են վերլուծական ձևերը: Սույն տարբերությունները ոչ միայն արտացոլում են լեզուների տիպաբանական բնութագրերը, այլև ազդում են յուրաքանչյուր լեզվի դարձվածքների ըմբռնման և մեկնության վրա:

Հետաքրքրություն է ներկայացնում ատենախոսության երրորդ գլուխը, որը նվիրված է նախդիր/կապ կամ մակբայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերին: Բայական բաղադրիչի տեղաշարժը պայմանավորված է լեզուների շարադասական տիպով: Անգլերենին տիպաբանորեն բնորոշ է VO շարադասական տեսակը: Ուստի անգլերենում ոչ բայական բաղադրիչը, թեև առանձնանում է բայից և փոխում է դիրքը, երբեք չի նախորդում բային: Հայերենին բնորոշ են թե՛ OV, թե՛ VO շարադասական տեսակները, ուստի հայերենի հարադրավոր բայերի ոչ բայական բաղադրիչը հաճախ կարող է թե՛ նախորդել և թե՛ հաջորդել բայական բաղադրիչին:

Նշելի է, որ ատենախոսի հարցադրումները պատճառաբանված են, եզրահանգումները՝ գիտականորեն համոզիչ: Աշխատանքը շարադրված է նյութի բազմակողմանի իմացությամբ. հեղինակը քաջ գիտի առաջադիր հիմնահարցի էությունը, դրսևորում է լեզվական իրողությունները դասդասելու, դրանք համեմատելու և հակադրելու կարողություններ: Ատենախոսությունը գրված է բարեխեղճությամբ, պատասխանատվության բարձր զգացումով, գիտական անաչառությամբ, որոնք որոշակի երևում են ատենախոսության յուրաքանչյուր հարցի պարզաբանման ընթացքում:

Խնամքով է կառուցված ատենախոսության օգտագործված գրականության ցանկը: Մենք նկատի ունենք «Գիտական գրականություն», «Բառարաններ», «Էլեկտրոնային աղբյուրներ» հստակ բաժանումները, ինչպես նաև գծապատկերների և աղյուսակների դիտարկումները: Հեղինակն ըստ հարկի օգտվում է այդ աղբյուրներից, որոնք գիտական մեկնաբանությանը հաղորդում են հավաստիություն և ստուգություն:

Ունենք երկու դիտարկում, որ կարող են օգտակար լինել ատենախոսին:

1. Շահեկան կլիներ ներկայացնել հարադրավոր բայերի կիրառությունները տարբեր ոճերի խոսքաշղթայում, մասնավորաբար անգլագիր գեղարվեստական ստեղծագործության և հայերեն թարգմանության մեջ՝ նշելով դրանց կիրառական և ոճական արժեքները:
2. Աշխատանքի որոշ հատվածներում գերակայում է նկարագրական կողմը, մինչդեռ հարկ էր, որ կատարվեր երկու լեզուների հարադրավոր բայերի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունների զուգահրակական միահյուսված քննություն, ներկայացվեր՝ նույն հարադրավոր բայը երկու լեզուներում էլ պատկանո՞ւմ է արդյոք նույն իմաստային դաշտին, թե՞ ոչ:

Իրականում սույն ատենախոսությունը խնդրո առարկայի զուգահրակական ուսումնասիրության լայն քննություն է՝ բանասիրական հետաքրքրական աշխատանք, որի կառուցվածքը կուռ է և տրամաբանված: Հեղինակի սույն աշխատանքը երևոյթի ներկայացման փորձ է: Ատենախոսության հիմնական դրույթները լիովին ընդգրկված են հրատարակված հոդվածներում:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ Սոնա Կոնստանտի Սիմոնյանի «Հարադրավոր բայերը ժամանակակից հայերենում և անգլերենում (զուգահրակական քննություն)» խորագրով ատենախոսությունն ունի տեսական և գործնական

նշանակություն: Այն գիտական որոշակի նյութ կարող է տալ համեմատական լեզվաբանության տարաբնույթ հարցերի մշակմանը:

Սոնա Կոնստանտի Սիմոնյանի «Հարադրավոր բայերը ժամանակակից հայերենում և անգլերենում (զուգադրական քննություն)» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 8-րդ կետի պահանջներին և ԲԿԳԿ-ի կողմից Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության հեղինակը արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Վոլրոյայի Գալստյան


(Ստորագրություն)

26.01.2026

Աշոտ Վոլրոյայի Գալստյանի անդամագրության հսկությունը հաստատում եմ:

Խ. Աբովյանի անվան ՀԴԿ գիտաբարոյագիտական կենտրոնի

մ.գ.թ., դրոցենտ

Վանիկի Թադևոսյան



29.01.2026թ.